ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2021 թվականի N 583-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ»-Ի ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Նաիրա Հակոբյան»-ի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի N85 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թավականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Կ. Դեմիրճյան փողոց, բ/շ 2/11 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Նաիրա Հակոբյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի չորրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 13
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2021 թվականի N 584-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սույն թվականի հոկտեմբերի 14- ին գումարել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 հոկտեմբերի 14-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N 103-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը 2021 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի ընթացքի մասին:
4. «ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հադիսացող «անասնագոմ» կառուցելու համար նախատեսվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:
6. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 13
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2021 թվականի N 585-Ա

ՍՐԲՈՒՀԻ ԱԼԵՔԻ ՊԱԼԱՔՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 25-ի N97-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետով, հիմք ընդունելով քաղաքացի Սրբուհի Ալեքի Պալաքյանի (մուտք՝ 14.10.2021-ի. ՄԴ 502-21) ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Սրբուհի Ալեքի Պալաքյանին տալ բնակելի տան և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն:
2.Սրբուհի Ալեքի Պալաքյանին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3.Սրբուհի Ալեքի Պալաքյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 14
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2021 թվականի N 586-Ա

«ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով «Տաշիր-Ագրո» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հերմինե Սամվելի Ղազարյանի դիմումը (մուտք՝ 14.09.2021-ի ՄՀ-748-21)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«Տաշիր-Ագրո» ՓԲԸ-ին տալ անասնապահական համալիրի կառուցման նախագծման թույլտվություն:
2.«Տաշիր-Ագրո» ՓԲԸ-ն ի դեմս գլխավոր տնօրենի՝ ժ/պ Հերմինե Ղազարյանի պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 14
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 587-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2021 թվականի նոյեմբերի 16-ին անցկացնել մրցույթ համայքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների համար՝
1)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գնումների ծրագերի և տնտեսական զարգացման բաժնի (ծածկագիր՝2.1-2), ժամը՝11:30:

2)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գնումների ծրագերի և տնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝2.3-2), ժամը՝14:30:

2. Մրցույթն անցկացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով հրապարակել հայտարարություն և ծանուցել մրցութային հանձնաժողովի անդամներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 15
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 588-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվական հոկտեմբերի 15 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-099-0229-0001 կադաստրային ծածկագրով 6,9 հա գյուղատնտեսական նպատակային արոտավայրը վարձակալությամբ տրամադրել Աշոտ Մարտիրոսի Կիրակոսյանին:

2.Աշոտ Մարտիրոսի Կիրակոսյանի հետ կնքել արոտավայրի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 48300 (քառասունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 15
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 589-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/120» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 7-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «ՖԼԵԾ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագրերը, որակավորման և պայմանագրի ապահովումների տուժանքի համաձայնագրերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար բենզինի մատակարարման N ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/120 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 15
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 590-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՎԵՐԴԱՐՁ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշումով և հիմք ընդունելով Հովսեփ Սամվելի Ղուկեյանի դիմումը (մուտք՝ 15.09.2021-ի ՄԴ465)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հետ վերադարձնել Հովսեփ Սամվելի Ղուկեյանի սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված Մերսեդես- Բենս (Mercedes-Benz) E220 մակնիշի, 26ՍԼ 2016 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 7000 (յոթ հազար) դրամ գերավճարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 15
ք.Տաշիր